նորդն Պետրոսի առաքելոյ (ՇՆՈՐՀԱԼԻ)։ — «Ձեզ՝ որ էքդ գլուխ յետ Քրիստոսի, սրբբեալք ի Նամնէ եւ գլուխ կաթողիկէ եկեղեցւոյդ Հռոմայեցւոց, ամենայն եկեղեցեաց մօր... Գրիգորիոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, շնորհօքն Աստուծոյ կաթողիկոս հայմօրէն եկեղեցւոյս Հայաստանեայց, որդի սրբոյ եկեղեցւոյդ՝ որ է հիմն օրինաց հայմօրէն քրիստոնէութեան» (ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԳԻՐԱՏ)։

Մենք դիւրաւ կընայինք, հինէն ու նորէն, երկարել նման վարդապետական փաստեր, և կամ թուել շարքը հայ աշխարհիկ և եկեղեցական անձերուն որոնք ուխտի կամ դաւանական տեսակէտով դիմեր են Ս. Քահանայապետին՝ մէջն ըլլալով նաեւ կաթողիկոսներ, բայց չենք ուզեր զեղծանել՝ հեռանալով մեր նպատակէն։ Միայն հարկ է շեշտենք Աւետիք քահանայի աբարքը որպէս ամենագովելի և համեմատ Հայ Եկեղեցւոյ ուղղափառ հաւատքին, քանի որ ան վերջապէս կը դիմէ ներում հայցելու անկէ՝ որ գլուխ է յետ Քրիստոսի, այն եկեղեցիէն՝ որ մայր է բոլոր եկեղեցիներու։

Աւետիքի հաւատքով և համոզումով էր նաեւ անոր զինակից ու մարտակից Շահումեանը և իր ընտանիքը Վենետկոյ մէջ[1] *և դեռ ուրիշներ*[2]*։*

Այս վկայութիւններէն կը հետեւի Զամչեանի անկեղծութիւնն և հաւատարմութիւնը՝ նկատմամբ Աւետիք քահանայի վերջին արարքին պատմական ճշմարտութեան։

Յոյց տալու համար թէ Զամչեան նոյնպէս անկեղծ և հիմնաւոր է իր միւս խօսքերուն մէջ ալ՝ երբ Աւետիք քահանայի ներման խնդրոյ մասին կ՝աւելցնէ «ըստ որում սովորութիւն էր ազգին՝ յայսպիսի մեծամեծ իրս դիմել ի գահն Հռովմայ», մէջ կը բերենք Ժ. Դարու հին պատմական փաստ մը՝ որուն յոյն աղբիւրներ ալ կը վկայեն.

«Քահանայ ոմն էր արժանաւոր զարդարեալ ամենայն առաքինութեամբք և սրբութեամբ՝ յԱգբագնուենաց գաւառին՝ որ կոչի Գոգովիտ, ի գեղն որ Բզրայրի գոմ անուն կոչի. և ի գեղն բնակեալ էր այր մի պատուական ի տանուտիրական տանէ. և խարեալ զնա սատանայ չարութեամբ յայսմ նուագի, անգեղջ և անդառնալի խորհրդով արհամարհէր զքահանայն Աստուծոյ, և անարգէր զնա գարշելի և տգեղագոյն բանիւք սաստիկ վիճելով ընդ երկար աւուրս։ Զայրացեալ սրբոյ քահանային նզովեաց զնա դառնապէս, և ըստ աստուածատուր իշխանութեանն զոր ունէր ի ձեռին իւրում՝ զկապելն և զարձակելն ի յերկինս և յերկրի, կապեաց զնա բանիւ և զօրութեամբն Աստուծոյ՝ յանլուծանելի կապանս իմանալիս հոգեկաշկանդ խեղդմանց, ոչ կարացեալ արձակել զնա ումեք, բայց եթէ բանիւք բերանոյ իւրոյ և մատամբ սրբոյ աջոյ ձեռին նորա։ Այպա եհաս վախճան քահանային գնալ զճանապարհս հարց իւրոց՝ ըստ օրինակի ամենայն կենդանեաց. և նա մնաց անդեղջ սրտիւ յ՝անել բանտի ի տան կապանացն։ Այպա ուրեք եկեալ ի միտս իւր, և գիտացեալ զհիգութիւն կորստեան անձին իւրոյ, ըստ մարգա-

---

1. Այդ կրօնական տեսակէտին շուրջ կ՝անդրադառնայ նաեւ Ալիշան հեզ ու փափկանկատ ձեւով, հոն՝ ուր կը խօսուի Ա. Շահումեանի և Աւետիք քահանայի մասին. «Եկատատան... է հայրենիք Թեչադրի Պատմութեան Ղ. Ալիշանեցոյ, կամ Դաւիթ բէկի, որպէս և յիշեցաք ոչ սակաւ ուրեք, այն է Ստեփանոս Շահումեանց, որդի Վարդանիսի կամ Վրթանիսի, մեծ ի զօրավարաց նոցին. զոր՝ իբրեւ գլխաւոր կամ սիրելագոյն անձն՝ ընտրեալ է Ռաֆֆի ի ծանօթ վիպասանութեանն, պէս-պէս դիպուածս ստեղծարանելով ըստ քմաց հաճոյից. որ ինչ ասոյգ էր՝ յիշեցաք ի կարգի տեղագրութեանս. իսկ որ յետ այնց դիպաց՝ անծանօթ մնայր նա, և զի մի՝ եւս մնայցէ, և մի օտարոտի իմն կարծեցի գալուստ նորա յարեւմուտս և յարիլ ընդ միաբանս Հռոմէական եկեղեցւոյ, (որպէս կարծէ հեղինակ յետին՝ ծանօթութեան վիպասանութեանն, և փոփոխէ զաթոռն յոր դիմեաց միւս եւս նշանաւոր ներգործող յանցս պատերազմացն՝ Տէր Աւետիք), արժան համարիմ յայտ առնել, զի բազում ժամանակօք յառաջ ծանօթ էր առնին Շահումեանց ի քաղաքի ասա Իտալիոյ յորում գրեմս» եւն (Ախագան, էջ 300).

2. Ուխտիս ժամանակագրութիւնն ալ բաց ի Շահումեաններէն, զորս կը յիշէ թէ «Լէոն ի Վեհէժ յազգէ մերմէ եղբարք երկու հարուստ վաճառականք ի Հաբանդ երկրէ .. Ստեփան... և Նահապետ» (1737), նախապէս կը խօսի ուրիշ Ղափանցիի մը մասին ալ. «պատանի մի էր աստուածասէր ի վաճառականութիւն եկեալ յարեւելից Յովհաննէս անուն ի Հաբանդ երկրէ Հայաստանեայց» եւն. (1736), թերեւս Դաւիթ բէկի քաջերէն մէկը որ միւսներուն պէս Արեւմուտք դիմեց քայքայումէն վերջ.